№ 134 Օգոստոսի 11 (23) 1879 Օգոստոսի 11 (23) № 134

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիա։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Ինչպէս է կառավարում էջմիածինը իր հեռաւոր վիճակները։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Անցեալ շաբաթ հեռագիրներից մէկը հաղորդեց, որ Ռ. Դուռը զբաղված է Փոքր-Ասիայի մէջ մրցնելի վերանորոգութիւնների հարցով, որ Թիւրքաց կառավարութիւնը մտադիր է Փոքր-Ասիայի և մանաւանդ Հայաստանի վարչական ղեկը յանձնել քրիստոնեայ պաշտօնեաներին, որ լուր է տարածված, իբր թէ Ռ. Դուռը դիտաւորութիւն ունի նշանակել երկու նահանգապետներ, վեց փոխնահանգապետներ և 22 մուտասարիֆներ քրիստոնեաներից Էրզրումի, Մուշի և Վանի նահանգները կառավարելու համար։

Կ. Պօլսից ստացված այս հեռագիրը բազմաթիւ լրագիրների դատողութիւնների նիւթ է դարձած։ Ի միջի այլոց Ռ. Դրան այդ մտադրութեան մասին ռուս «Голосъ» լրագիրը հետևեալ կարծիքն է յայտնում։

«Արդեօք կիրագործվի Ռ. Դրան այդ գեղեցիկ դիտաւորութիւնը։ Թիւրքաց կառավարութեան համար դժուար չէ ընտրել իր քրիստոնեայ հպատակներից այնպիսի անձանց, որ կարողանային Փոքր-Ասիայի քրիստոնեաներով բնակեցրած նահանգները կառավարել։ Այդ մտադրութեան վրա քաղաքական կէտից նայելով շատ հետաքրքիր են այդպիսի դիտաւորութեան շարժառիթները։ Այդ շարժառիթների մասին մենք արդէն խօսել ենք. Ռ. Դուռը ցանկանում է, որ Անգլիան բոլորովին չը խառնվի Փոքր-Ասիայի գործերի մէջ»։

Ռ. Դրան այդպիսի քաղաքականութիւնը կը շարունակվի, քանի որ Մահմուդ-Նեդիմ-փաշա սուլթանի այժմեան խորհրդատուն է և քանի որ նա գաղտնի կերպով առաջնորդում է այժմեան մեծ վիզեր Սարիֆի-փաշային։ Մենք վաղուց յայտնել ենք մեր ընթերցողներին, որ Մահմուդ-Նեդիմ-փաշա անգլիական քաղաքականութեան թշնամի և մի և նոյն ժամանակ Ռուսաստանի կողմնակից է։ Այդ է պատճառը, որ ռուս լրագիրները միաձայն մեծ բարիքներ են խոստանում Թիւրքիային. եթէ այդ երկրի կառավարչական ղեկը Նեդիմ-փաշայի ձեռքը անցնի։ Ռուսաց կառավարութեան համար շատ նշանաւոր է իմանալ արդէօք ո՞վ կը նշանակվի մեծ վիզեր. Մահմուդ-Նեդիմ-փաշա, թէ Միթհադ-փաշա։ Եթէ երկրորդը ստացաւ մեծ վիզերի պաշտօնը, այդ կը նշանակէ, որ անգլիական քաղաքականութիւնը յաղթող է հանդիսացել։

Ֆրանսիական հանրապետութիւնը նորերում մեծ շքեղութեամբ կատարեց Նանսիի մէջ հանգուցեալ Թիերի արձանի բացման հանդէսը։ Քաղաքական զանազան կուսակցութիւնների նշանաւոր շատ անդամներ հրաժարվեցան մասնակցել հանդիսին, վախենալով Գերմանիայի դէմ այնպիսի մի բան յայտնել, որ այդ երկու երկիրների մէջ անբաւականութեան առիթ դառնար։ Հրաժարվողների թւումն է եղել և Լէօն Գամբետտա, որ վերոյիշեալ միտքը բացարձակ յայտնեց։ Որքան էլ ֆրանսիացիք աշխատել են ոչինչ նկատողութիւն չանել Գերմանիայի մասին այդ հանդիսի ժամանակ նրանց չէ աջողվել։ Ֆրանսիական բանաստեղծ պ. Լեդուվէ իր ոտանաւորով հրաւիրել է իշխան Բիսմարկին վկայել, թէ որքան աշխատել է հանգուցեալ Թիերը Ֆրանսիան ազատելու համար։

Նանսիի մէջ կատարված հանդէսը և Ժիւլ Ֆերրիի օրէնքի նախագիծը բարձրագոյն կրթութեան մասին այժմ գրաւում են Ֆրանսիայի և օտար պետութիւնների

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉՊԷՍ Է ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԻՐ ՀԵՌԱՒՈՐ ՎԻՃԱԿՆԵՐԸ ՕՏԱՐ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԷՋ

Մի կողմ դնելով այն հարցը, թէ արդեօք պէտք է, որ Էջմիածնի իրաւասութիւնը տարածվի համայն հայ ազգութեան հոգևոր իշխանութիւնների վրա, ուր և որ պետութեան մէջ լինէին նրանք,—այլև, չը քննելով այն շատ անգամ յարուցված և կրկին դժբաղդաբար արծարծվող խնդիրը, թէ արդեօք պէտք է Էջմիածնի Վեհ. Հայրապետին ընդունել, որպէս միմիայն գահակալ ս. Լուսաւորչի աթոռի և որպէս բարձրագոյն ներկայացուցիչ եկեղեցու, իսկ բոլոր միւս կաթողիկոսութիւնները համարել հակաթոռ և «հեստեալ»—յիշեալ խնդիրները որքան կարևոր, որքան և ծանր նշանակութիւն ունենային, այսուամենայնիւ, նրանց մասին լռելը այժմ աւելի խոհեմութիւն ենք համարում, քան թէ հրապարակաւ քննութեան ենթարկելը։

Մենք պէտք է խօսենք մի բանի վրա միայն, թէ ինչպէս է կառավարում այժմեան Էջմիածինը իր հեռաւոր վիճակները, որոնք գտանվում են օտար պետութիւնների մէջ, և որոնք անմիջական կախումն ունին Նրանից։ Դրանով կը բացատրվի այն միտքը, թէ որքան կորցրել է Էջմիածինը իր բարձր նշանակութիւնը, և որ ատիճան անընդունակ է դարձել Ռուսաստանի սահմաններից դուրս պահպանել իր հեղինակութիւնը։

Մեր խօսքը Պարսկաստանի և Հնդկաստանի հայերի մասին է։

Մեր յօդուածին առիթ տուեցին մի քանի նամակներ և պաշտօնական թղթեր, որ այս օրերում ստացվեցան «Մշակի» խմբագրատան մէջ Պարսկաստանի Սպահան քաղաքից և Հնդկաստանի Կալկաթայ քաղաքից, և դլխաւորապէս յիշեալ թղթերի վրա հիմնելով մեր յօդուածի բովանդակութիւնը, հարկաւոր ենք համարում երևան հանել մի քանի ցաւալի իրողութիւններ։

Ռուսաստանի սահմաններից դուրս միայն Պարսկաստանի և Հնդկաստանի հայերն են մնացել, որ կարված չեն Էջմիածնից, որ ենթարկվում են սուրբ Աթոռի հոգևոր իշխանութեանը։ Յիշեալ երկու պետութիւնների հայերը միասին վեր առած, երկու մեծ թեմեր կամ վիճակներ են կազմում, որ կառավարվում են երկու առանձին առաջնորդներով, որոնք ուղարկվում են Էջմիածնից։ Առաջինը Ատրպատականի վիճակն է, երկրորդը՝ Սպահանի և Հնդկաստանի *) վիճակը միասին։ Խօսենք իւրաքանչիւրի մասին առանձին։

Ատրպատականի վիճակը Անդրէաս արքեպիսկոպոսի Էջմիածին կանչվելուց յետոյ, որ երկու տարի կը լինի, բոլորովին զուրկ է մնացել առաջնորդից և ժողովրդի հոգևոր հովութիւնը թողած է անտէր։ Կարծես, Էջմիածինը մոռացել է, թէ այնտեղ հայեր կան, որոնց պէտքերը այն աստիճան ստիպողական են, որ հարկաւոր էր նրանց վրա աւելի և աւելի մտածել, հարկաւոր էր աւելի հոգ տանել նրանց պահանջները դարմանելու։ Առաջնորդի կարևորութիւնը և հետևապէս նրա բացակայութեան վնասները չօչափելի կացուցանելու համար՝ պէտք է ի նկատի ունենալ այն պայմանները, թէ ինչ նշանակութիւն ունի նա մահմեդական աշխարհում։ Այստեղ առաջնորդը չէ համարվում իր հօտի լոկ հոգևոր ներկայացուցիչ, որ եկեղեցական գործերի նեղ շրջանից դուրս նրա իրաւունքները սահմանափակված լինէին։ Առաջնորդը մահմեդական Պարսկաստանում մի և նոյն ժամանակ ընդունվում է կառավարութիւնից որպէս մարմնաւոր գլուխ իր թեմի, որ իրաւունք ունէր միջամտութիւն գործելու հայ ժողովրդի և տեղային իշխանութեան յարաբերութիւնների մէջ։ Նա է պաշտպանում հարստահարված հային դատաւորների, խանների, բէկերի, կղուսածատէրների և մասնաւոր անձերի բռնութիւնից։ Եւ եթէ առաջնորդ չը կար, ժողովուրդը բոլորովին անտէր մնալով, կրում է սարսափելի տառապանքներ։ Բացի դրանից, այժմ Պարսկաստանում ամեն տեղ սաստիկ տարածվել են բողոքական և կաթոլիկ միսիոնարներ, որոնց գործունէութիւնը հայերի մէջ կարող էր արդելք դնել միմիայն առաջնորդը, դպրոցների թիւը բազմացնելով, եղածները բարեկարգելով, և ամեն տեղ օրինաւոր քահանաներ նշանակելով։ Առաջնորդն է խաղաղացնում ժողովրդի մէջ ծագած երկպառակութիւնները, որոնք շատ անգամ կորստաբեր հետևանքների են հասնում, նա է վճռում մանաւոր անձների մէջ եղած վէճերը։ Այս բոլորից հասկանալի է, թէ ինչ անկարգութիւններ կարող էին ծագել, երբ Ատրպատականի նման մի մեծ վիճակը, որ ունի իր մէջ տասնի չափ հայաբնակ գաւառներ, Էջմիածնի անհոգութիւնից ամբողջ երկու տարի թողած է առանց առաջնորդի։ Մենք աւելորդ ենք համարում մի ըստ միոջէ ցոյց տալ բոլոր անկարգութիւնները, որոնք ծագեցան այս երկու տարվայ ընթացքում, և որոնք մեզ լաւ յայտնի են, թէ որպէս Թաւրիզի ազգային դպրոցը միանդամայն ընկաւ և համարեա իր օրհասականին հասաւ, թէ որպէս գաւառներում հայ աղջիկներ առևանգել և բռնութեամբ մահմեդական կրօնը ընդունել տալը սովորական դարձաւ, թէ որպէս այս և այն տեղ հայ գիւղացին կեղեքվեցաւ, կողոպտվեցաւ յափշտակիչ աղաներից, թէ որպէս օտարազգի որսորդները սկսեցին ամեն տեղ բոյն դնել հայերի մէջ և նրանց հեռացնել իրանց մայրենի եկեղեցուց, և այն, և այն,—այս բոլորը շատ հասկանալի, մի և նոյն ժամանակ ցաւալի երևոյթներ են։ Բայց մենք չենք հասկանում մի բան, թէ ինչ էր ստիպում, որ Էջմիածինը ամբողջ երկու տարի Ատրպատականի վիճակը թողել է առանց առաջնորդի, ինչ է նրա յամառ անտարբերութեան պատճառը։ Միթէ մի ժողովուրդ, որ վճարում է զանազան տեսակ հոգևոր տուրքեր—«պտղի», պըսակադրամ, մեռելի և կենդանու հոգեբաժին—չունի իրաւունք պահանջելու, թէ ինձանից փող էք ստանում, ինձ առաջնորդ տուեցէք, քանի որ չէք տալիս, էլ ինչու էք ստանում իմ փողը..... Մենք այդ համարում ենք մի տեսակ արհամարհանք դէպի ժողովուրդը, մի տեսակ հարստահարութիւն, որ ընդունակ է կատարելու միմիայն կղերը։

Այսքանը բաւական համարելով Ատրպատականի մասին, այժմ դառնանք դէպի Սպահանի և Հընդկաստանի հայերը, որոնք երկուսը միասին մի առաջնորդական վիճակ են կազմում։

Սպահանի նահանգի և Հնդկաստանի հայերը ունին առաջնորդ, Էջմիածնից ուղարկված, Գրիգորիս եպիսկոպոսին։ Բայց, որպէս երևում է Սպահանից և Կալկաթայից ստացած թղթակցութիւններից, դուցէ թեմի դրութիւնը աւելի լաւ կը լինէր, եթէ նրանք ևս Ատրպատականի պէս բոլորովին զուրկ մնացած լինէին առաջնորդից և Գրիգորիսի նման հովիւ չունենային։

Սպահանի և Հնդկաստանի վիճակի առաջնորդական աթոռը միշտ եղել է և է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում։ Տեղային աւանդական օրէնքների համեմատ, եթէ առաջնորդին պէտք լինէր Սպահանից նուիրակութեամբ գնալ Հընդկաստան, նա կարող էր իր աթոռից բացակայ գտնվիլ երեք ամիս, առաւելն վեց ամիս միայն։ Բայց Գրիգորիսը թողնելով Սպահանի ամբողջ թեմը—որի հետ կից են Թէհրանը, Համադանը, Շիրազը, Բուշիրը իրանց գիւղօրայքով,—թողնելով առանց հովուի, մօտաւորապէս չորս տարի կը լինի, որ գտանվում է Հնդկաստանում և այնտեղ թափառում է երբեմն Բոմբայում, երբեմն Բիրմանիայում, երբեմն Ջաւայում և երբեմն Կալկաթայում։ Մենք շատ օգտաւէտ և միանդամայն գովելի կը համարէինք Գրիգորիսի այցելութիւնները հեռաւոր արևելքում ցրված և համարեա կորած մեր ազգայինների մէջ, եթէ նրա նուիրակութիւնը չը լինէր չահեկան նպատակներով. եթէ նա կաշ-

*) Սպահանի վիճակի հետ միացրած են բացի Հնդկաստանից, նաև պարսից Թէհրան, Համադան, Շիրազ, Բուշիր քաղաքները իրանց գիւղերով։

հասարակական կարծիքը։ Այդ օրէնքը, ինչպէս յայտնի է, ձրգտում է խլել հոգևորականութեան ձեռքից բարձր կրթութիւն տալու իրաւունքը։ Ժիւլ Ֆերրի աջողութեամբ պաշտպանում է իր նախագիծը, որ պատգամաւորների ժողովից արդէն ընդունվեցաւ, բայց սենատի մէջ աղմկալի վիճաբանութիւնների պատճառ է դառնալ։ Այդ վիճաբանութիւնների ժամանակ յայտնվեց, որ Ժիւլ Սիմոն հանրապետականը անցել է իր նախկին թշնամիների բանակը. նա Ռիւֆէի և Բրոլիի հետ անխնայ յարձակվում է Ֆերրի օրէնքի նախագծի դէմ։ Լրագիրները կարծիք են յայտնում, որ Ժիւլ Սիմոն այդպէս վարվում է, որպէս զի աջակողմեանների օգնութեամբ դարձեալ ստանայ մինիստրի պաշտօնը։

Մի քանի լրագիրների թղթակիցները լուր հաղորդեցին, իբր թէ աւստրօ-ունգարական առաջին մինիստր կոմս Անդրաշի գիտաւորութիւն ունի իր պաշտօնից հրաժարվել։ Հրաժարականի պատճառը համարում են զինուորական մինիստրի և կոմս Անդրաշիի մէջ եղած անհամաձայնութիւնները Նովօ-Բազարի նահանգի գրաւման մասին։ Աւելի հեռատես լրագիրները անկարելի են համարում, որ կոմս Անդրաշի հրաժարական տայ միայն այն պատճառով, որ զինուորական մինիստրի հետ անբաւականութիւն է ունեցել։ Նորա ասում են, որ անհամաձայնութիւնը տիրում է աւստրիական կայսրի, պալատական կուսակցութեան և կոմս Անդրաշիի մէջ։ Այդ պատճառով կոմս Անդրաշիի հրաժարականը հաւանական են համարում։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 6 օգոստոսի

«Մշակի» 121-որդ №-ի առաջնորդող յօդուածը վաճառականների գործակատարների մասին ակամայ յիշեցրեց բարեկամիս (դեղագործ աշակերտի) այն բառերը, որով նա իրաւացի կերպով գանգատվում էր ինձ իր պրինցիպալի անազնիւ բնութեան վրա....«Ես չեմ կարող դեղագործ աշակերտների կախումն հաւասարացնել, համեմատացնել վաճառականների գործակատարների ստրկութեան հետ, բայց նայելով այն տեսակէտից, որ երկուսն էլ «աշակերտ» են, հետևաբար երկուսն էլ կարող են ընկնել հպարտ, ճնշող, ինքնահաւան և չարասիրտ պարոնների աղդեցութեան տակ, ուրեմն առաջինները նմանապէս դառնում են այդպիսի դէպքում մէկ մեքենայ, միջոց, հնար տերերի օգտին փող աշխատելու համար, և ոչ թէ աշակերտ, որ աւարտել է թէպէտ չորս կամ հինգ, մասամբ և վեց դասատուն գիմնազիայի, այնու ամենայնիւ այդ ընթացքում կարողացել է ունենալ իր համար ծանօթ, ընկեր, բարեկամ, կարողացել է իմանալ ինքնաճանաչութիւն, ինքնասիրութիւն, վերջապէս նա ունի այնպիսի հոգի ինչպէս և իր պրինցիպալը....

Որովհետև դեղագործութիւնը այնքան դժուար արհեստ է, որ չէ կարողանում բաւականացուցիչ թւով համակրող երիտասարդներ որսալ, դրա համար պարտք է դրած օրէնքով այդպիսի հեղինակութիւն ունեցող անձանց վրա, պրինցիպալների վրա, որ 1) վարվեն նրանք աշակերտների հետ ըստ կարեաց չափ սիրով, որ նրանց եռանդը չը կորչի անտանելի լուծն տանելու 2) որ նոքա պրինցիպալները, դասախօսութիւն անելով (եթէ այն քաղաքում դեղագործական ուսումնարան չը կայ) գրաւեն նրանց ուշադրութիւնը և միտքը, 3) որ պէտք է նրանց համար ընտանեկան զանազան լրագիրներ և շաբաթաթերթեր թէ դեղագործութեան վերաբերեալ, թէ մասնաւոր, մէկ խօսքով համեմատ նրանց ճանապարհին, ընթացքին, ուղղութեան, պարտաւորութեան—մտաւորապէս զարգացնել. (տես էջ Фармація Н. Heese, 1868 г.)։ Այո, պ. խմբագիր, վերոյիշեալ յօդուածը վերջացնում էր այնպէս, թէ հարկաւոր է այդ երիտասարդների մէջ ինքնաճանաչութիւն զարթեցնել, մի և նոյնը քարոզում էր և 124-որդ №-ի առաջնորդող յօդուածը. «Թող կարդան լրագիրներ և գրքեր, այցելեն հրապարակական դասախօսութիւններ...և այլն։ Շատ բնական է։

Բայց, ինչպէս պատմում էր բարեկամս, որ մանաւանդ «Մշակի» համար մարտիրոսվում էր, թէև նրան կարդում էր ազատ ժամանակը, մինչև որ նա իր պրինցիպալին չասեց թէ. «ինձ փոյթ չէ, եթէ ես ամենևին չեմ լինի դեղագործ, բայց 6-րդ դասատան աշակերտ լինելով, եթէ ես չիմանամ իմ մայրենի լեզուն, ոչ հայ լինեմ և ոչ ռուս, ուղիղ որ ինձ համար մեծ նախատինք է». և ինչ էք կարծում, նա պատասխանեց թէ, «դեղագործ աշակերտն ինչ է, և լրագիրն ինչ է» (!!) Այո, նա յանդգնեց այս բառերը ասել, ուրեմն այս պարոնի ուղեղին մտիկ տուած, վաճառականների գործակատարները թող կարծեն թէ «լրագիր» և «գրքեր» բառերը «երազ» են, և ոչ ինչպէս ամենի համար ձեռնտու միջոց զարգանալու։ Այդ մարդու մեծ գլխին մտիկ տուած, եթէ համալսարանական բարձրագոյն ուսում չէք ստացել, իրաւունք չունէք կարդալ ոչինչ, թէև հասկանաք աւելի լաւ։

Պ. խմբագիր, ինչպէս դուք ասում էք, դիցուք թէ «վաճառականը մնվել, կրթվել է կամայական, բռնաւոր ոգու մէջ, անհնարին է փոխել նրա հարստահարող ոգին....», չէ որ այն պարոնը, որի, վրա բարեկամս անբաւականութիւն էր յայտնում, թէև մնունդ է ստացել մի և նոյն չրջաններում, այնու ամենայնիւ ստացել է համալսարանում բարձրագոյն quasi—ուսումն... Ուրեմն բարեկամիս պրինցիպալը մնացել է մի և նոյն բթամիտ իմանկութենէ, և երևում է թէ այժմեան 19-որդ դարու բարձրագոյն ուսումն դեռ թոյլ է արմատախիլ անելու անխիղճ մարդկանցից բարբարոսութեան արմատները։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկուշաբթի օգոստոսի 13-ին Մեռելոցի տօնի պատճառով տպարանում չեն աշխատում, ուրեմն «Մշակի» հետևեալ համարը կը հրատարակենք չորեքշաբթի օգոստոսի 15-ին։

—

Վ.—ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ հաղորդում են, որ տեղացի ուսուցիչները այս տարի մի լաւ խաղ խաղացին նոր հոգաբարձութեան հետ. նրանք առաջուց գրաւոր կերպով յայտնեցին, թէ առաջիկայ տարին դարձեալ կը շարունակեն իրանց պաշտօնը նոյն պայմաններով և նոյն ռոճիկներով, որ անցեալ տարի ստանում էին։ Նոքա այսպէս հաւատացնում էին մինչև զանազան խորամանկութիւններով կարողացան հեռացնել օտարերկրեայ ուսուցիչներին։ Երբ այս վերջինները գնացին և ասպարէզը տեղացիներին մնաց, այնուհետև սկսեցին մեծ մեծ ռոճիկներ պահանջել։ Հոգաբարձութիւնը դրանց խարեբայութիւնը նկատելով, մտադիր է Թիֆլիսից նոր ուսուցիչներ հրաւիրել։

—

Մեզ հաղորդում են Վ.—ԱԳՈՒԼԻՍԻՑ, որ կրօնուսոյց տէր Մեսրոպ քահանային և նրա կնոջը հրաժարացրել են դպրոցների մէջ պաշտօնավարութենից, իսկ այժմ աշխատում են զրկել քահանային իր ծուխից, որպէս զի մի քանի աղաների կրքերը յագեցրած լինեն։

—

Դարձեալ խնդրում ենք մեր թղթակիցներին նամակները և յօդուածները որքան կարելի է մաքուր գրել։ Անմաքուր գրված յօդուածները առանց կարդալու զամբիւղը կը դցենք։

—

Երկուշաբթի օգոստոսի 13-ին մի քանի թատրօնասէր երիտասարդներ Թիֆլիսի ամարային թատրոնում կը ներկայացնեն «Անի Քաղաքի աւերումն։»

—

Մեզ հաղորդում են հետևեալը. «Վարդաշէնի վրաց դպրոցի ուսուցիչները յուլիսի 19-ին ՆՈՒԽի գալու ժամանակ պատահում են 5 աւազակների։ Վերջիններս նոցա վրա հրացան են արձակում, 3 գնտակ դիպչում է ուսուցիչ Բէջանովին, միւս ընկերները փախչելով ազատվում են։ Զարագործները հոգեվարք զոհին դաշոյնի հարուածներով էլ կոտոր կոտոր են անում։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Մի չորս օր առաջ

խատէր դարման տանել նրանց հոգևոր պէտքերին, և ուշադրութիւն կը դարձնէր այն հիմնարկութիւնների վրա, որոնք անհրաժեշտ էին նրանց կապված պահելու իրանց եկեղեցու և ազգի հետ։ Բայց ինչպէս երևում է մեր ձեռքը հասած թղթակցութիւններից, Գրիգորիսի նուիրակութիւնը Հնդկական երկու թերակղզիներում ցրված հայերի մէջ ունի միայն դրամ հնձելու նպատակներ։ Նա քրքրում է միայն հին կտակները, եկեղեցական գումարները, անտէր մնացած ժառանգութիւնները, աշխատելով նրանց միջից իր և Էջմիածնի վեհարանի համար բաժին հանել։ Առաջնորդի այս տեսակ վարմունքը, ի հարկէ, մի կողմից կը գրգռէր ժողովրդի զզուանքը, որ սպասում էր նրանից բարի գործեր միայն, միւս կողմից, պատճառ կը տար զանազան երկպառակութիւնների։ Դրանցից մէկն է Կալկաթայում պատահած այն մեծ խռովութիւնը, որ ծագեց ժողովրդի և նրանից ընտրված «եկեղեցպանի» ու «աւանդապահի» մէջ (*)։ Խռովութիւնը այն աստիճան սատկացաւ, որ եկեղեցու դռներն փակվեցան, ժամասացութիւնը դադարեց և գործը ենթարկվեցաւ անգլիական բարձր ատեանի քննութեանը, և եկեղեցին հազար ոսկի տուգանք կրեց։ Այդ բոլորը կատարվեցաւ Գրիգորիսի աչքի առջև և մասամբ նրա թելադրութեամբը . . . . .

Ի հարկէ, այդ բոլորը չէին կարող դայթակղութեան պատճառ չը տալ Հնդկաստանի հայ ժողովրդին, որը առանց դրան ևս զզուած է հոգևորականից, խորթացած է իր եկեղեցուց և օտարացած է իր ազգութենից..... Եւ Գրիգորիսը բոլորովին անտանելի դառնալով, Կալկաթայի հայ հասարակութեան դէմքով, ժողովուրդը 53 անձների ստորագրութեամբ մի բողոք է ներկայացնում իրան Գրիգորիսին (*), որ նա այլ ևս պէտք չէ իրանց, որ թողնէ Հնդկաստանը և շուտով հեռանայ, եթէ ոչ ուրիշ կերպով կը վարվեն նրա հետ..... Բայց Գրիգորիսը տակաւին իր տեղից չէ շարժվել, և Թիֆլիսեցոց լաւ ծանօթ Պետրոս Հաքիմեանի արբանեկութեամբ դարձեալ շարունակում է իր գործունէութիւնը.... (**)

Ցայտնի բան է, այս բոլորը ծածուկ չէին կարող մնալ Էջմիածնից, ուր մի քանի անգամ դիմել է մի և նոյն ժողովուրդը իր բողոքներով, բայց Էջմիածինը ինչու յետ չը կանչեց Հնդկաստանից իր ներկայացուցչին։ Շատ հասկանալի է, թէ ինչու, հեռաւոր արևելքի հայ ժողովուրդի ձայնը Էջմիածնի համար ոչինչ նշանակութիւն չունի, երբ նա Գրիգորիսից ուրիշ օգուտներ է սպասում....

Մինչ Հնդկաստանում վերոյիշեալ անկարգութիւնները խռովեցնում էին ժողովրդին, մինչ Գրիգորիսն այնտեղ իր առանձին դործովն էր զբաղված, այն ժամանակ այդ եպիսկոպոսի առաջնորդութեանը յանձնված և չորս տարի անտէր թողած վիճակի միւս մասում, Սպահանում, աւելի վատ անկարգութիւններ էին կատարվում։ Սպահանի հայերը տեսնելով մի կողմից Գրիգորիսի անպտղութիւնը և նրա բոլորովին անգոհացուցիչ լինելը իրանց պէտքերի համար, միւս կողմից մըտածելով, որ նա եթէ որ և իցէ օգուտ ևս ցանկար բերել, դարձեալ անկարող էր, որովհետև անունով միայն Սպահանի առաջնորդ էր, այլ ինքը Էջմիածնի հրահանգների համեմատ դեղերվում էր Հնդկաստանում և տարիներով Սպահանը թողել էր անտէր,—1876 ամի 27 մայիսի դիմում են Էջմիածին, Վեհ. Կաթողիկոսից խնդրելով, որ Գրիգորիսին յետ կանչէ և իրանց համար մի նոր առաջնորդ ուղարկէ *)։ Ժողովրդի խնդիրքը մընում է անկատար, և մինչև անգամ պատասխանի ևս չեն արժանացնում, թէև հասարակութիւնը իր խնդիրքը երեք անգամ կրկնում է հեռագրով։ Բոլոր ՀԱՆՔերից յետոյ ներկայ տարվայ փետրվար ամսի 4-ին Սպահանում կազմվում է ընդհանուր ժողով, 117 անձներից բաղկացած, և Գրիգորիսի փոխարէն ընտրում են ս. Ամենափրկչի վանքի (Նոր Ջուղայում) աթոռակալ պ. Մովսէս Նահապետ անունով մէկին (երևի աշխարհական) և դրանով չը բաւականանալով, ժողովը վճռում է դիմել թէհրան և մի օտարազգի դեսպանի միջամտութիւնը խնդրել, որ նա ներգործէ Էջմիածնի վրա Գրիգորիսին փոխելու և մի նոր առաջնորդ ուղարկելու համար *)։

Մենք բոլորովին դատապարտում ենք Սպահանի հասարակութեան վարմունքը, որ իրան թոյլ է տուել օտարազգի դեսպանի միջամտութիւնը հրաւիրել հայոց հոգևոր կառավարութեան գործերի մէջ,—բայց մի և նոյն ժամանակ չենք կարող արդարացնել Էջմիածնի յամառութիւնը, որ նա մի ամբողջ հասարակութեան խնդիրքը թողնում է անկատար և առանց պատասխանի, և նրան առիթ է տալիս ծայրայեղ միջոցների դիմել։

Հարցնում ենք, ինչով կարելի է բացատրել Էջմիածնի քաղաքականութիւնը, որ նա երկու հեռաւոր վիճակների—Սպահանի և Հնդկաստանի—ժողովրդի կամքի հակառակ պահպանում է Գրիգորիսի նման մի անձ։ Երկուսից մէկը,—կամ Էջմիածինը կամենում է հասկացնել ժողովրդին, թէ նա ձայն չունի առաջնորդի ընտրութեան և փոփոխութեան մասին,—կամ, որպէս գրում են, Գրիգորիսը մի ագենտ է, որ առաջնորդի անունով ուղարկվել էր Հնդկաստան առանձին մթին գործերի համար.... թէ առաջին և թէ երկրորդ ենթադրութիւնները երկուսն էլ անօգուտ և միանգամայն վնասակար են։ Որովհետև Էջմիածինը այնքան ուժ չունի, որ Ռուսաստանի սահմաններից դուրս, հեռաւոր արևելքում ցրված մի հայ ժողովուրդին բռնութեամբ հնազանդութեան մէջ պահէ, այսօր դիմեցին օտարազգի դեսպանին, էգուց կը դիմեն օտարազգի միսիոնարին, իսկ միւս օրը անգլիական կառավարութեանը... ինչ կը լինի հետևանքը, այդ ամեն ոք կարող է հասկանալ։

Մենք, ի հարկէ, ուրախ կը լինէինք, որ մեզ հասած տեղեկութիւնները մասամբ սխալ լինէին, բայց մի և նոյն ժամանակ չենք կարող չը յայտնել մեր ցաւակցութիւնը, որ Էջմիածինը այս աստիճան անհոգութեամբ և արհամարհանքով է վերաբերվում դէպի գործը։ Վերջացնում ենք մեր յօդուածը, խնդրելով Պարսկաստանի և Կալկաթայի մեր թղթակիցներից հաղորդել աւելի մանրամասն տեղեկութիւններ,—և մի և նոյն ժամանակ հրաւիրում ենք Վեհ. Կաթողիկոսի հայրական ուշադրութիւնը, վերջ տալ խռովութիւններին, և հոգալ հեռու արևելքում ցրված, մոլորված, իր կորուսեալ ոչխարների վրա....

Մէլքզադէ

(*) «Եկեղեցպան» և «աւանդապահ» բառերի նշանակութիւնը մեզ շատ յայտնի չէ, թէ նրանք ինչ պաշտօն են կատարում ազգային գործերի մէջ, բայց որքան հասկացվում է Կալկաթայից ստացված մի նամակի բովանդակութիւնից, «եկեղեցպան» մի և նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ մեզ մօտ հասկացվում է բառերով եկեղեցու երեցփոխ կամ դանձապետ։ Իսկ «աւանդապահը» մի տեսակ գանձապետ պէտք է լինի, որ կարգված է եկեղեցական այն գումարների վրա, որոնք Հնդկաստանի հայերի հարուստ ժամանակներում հաւաքվել և մինչև այսօր պահպանվել են աղքատներին կամ օտար երկիրներից Հնդկաստան դաղթողներին օգնելու նպատակով։

(*) Բողոքագրի պատճէնը Կալկաթայից ուղարկված էր «Մշակի» խմբագրատանը, որի մէջ մի առ մի թուել են Գրիգորիսի անկարգութիւնները։

(**) Զարմանում ենք, թէ ինչ աղբիւրներից էր քաղում «Արարատ» ամսագիրը այն տեղեկութիւնները, որ մի քանի տարի առաջ անդադար հրատարակում էր Գրիգորիսի սիրագործութիւնների մասին։

(*) Գրիգորիսը հէնց սկզբից չը կարողացաւ դրաւել սպահանցոց համակրութիւնը և ատելի դարձաւ, որովհետև, որպէս տեղեկանում ենք մի մասնաւոր նամակից, նա նշանակվել է Սպահանի և Հնդկաստանի առաջնորդ Պարսկաստանի մեծ սովից անմիջապէս յետոյ, և Սպահան գնալու ժամանակ, թէհրանից անցնելով, այնտեղ յանձնում են Գրիգորիսին, որպէս առաջնորդի, մի գումար, որ հաւաքված էր Սպահանի սովալլուկներին բաժանելու համար. Գրիգորիսը բերում է փողերը, և փոխանակ իր նպատակին հասցնելու, պահում է իր ղրպանում...սովատանջ ժողովուրդը մի քանի տարուց յետոյ է հասկանում այդ։

(*) Ժողովի վճռի պատճէնը ուղարկված է «Մշակի» խմբագրատանը։

գեմնուկ թրքաբնակ գիւղի մօտ՝ ճանապարհին, աւազակները մի թուրք երիտասարդի գնտակահար անելով սպանում են, վիզը կտրում և մարմինն էլ ցախի մէջ, արնաշաղաղ շորերն էլ նրա կրծքի վրա դնելով այրում են։»

—

Մեզ հաղորդում են ՆՈՒԽՈՒՑ. «Այստեղ երկար շաբերից յետ ամսիս 23-ից եկած անձրևները բաւական զովացրին օդը։ Բէօմիւրի աստիճանացոյցի վրա ստուերում 25 աստիճան հանող շաբը այժմ 7 աստիճանով պակասել է։—Այս տարվայ մի քանի նուխեցիներից ցանած ծխախոտը մեծ յոյսեր է տալիս։ Խաղողները անչափ վնասված են թռչից. այդի չը կայ որ այդ հիւանդութեամբ վարակված չը լինի։ Խաղողի հասած ողկոյզները բոլորը տաքտաքվում են։ Միայն բրինձը այս կողմերում լաւ է այս տարի։»

—

Օրերումս մի քանի պարոններ ԹԻՖԼԻՍՈՒՄ մտադիր են ստորագրութեամբ նուիրատուութիւններ հաւաքել յօգուտ մի հայ երիտասարդի, որ Ս. Պետերբուրգի նկարչական ակադեմիայում է սովորում։ Երիտասարդին միջոցներ են պակաս թէ իր ուսումը շարունակելու և թէ ոսկէ մեդալ ստանալու նախկին աշխատանքները կատարելու համար։ Ցույս ունենք, որ հասարակութիւնը անտարբեր չի մնայ դէպի այդ գեղեցիկ գործը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Սիր Գարնէտ Վօլզէլէյ տեսակցեց զուլուսների բազմաթիւ առաջնորդների հետ, որոնք եկել էին յայտնելու իրանց հպատակութիւնը։ Սիր Վ.օլզէլէյ նրանց ասաց, թէ նա սաստիկ ուրախ է, որ նրանք եկել են հաշտվելու Անգլիայի հետ. յետոյ նա աւելացրեց, որ Զուլուլանդայի ժողովրդի դէմ չեն պատերազմում անգլիացիք, այլ նրանք պատերազմում են զուլուսների թագաւորի դէմ, և Անգլիան ամենափոքր դիտաւորութիւն անգամ չունէ գրաւելու Զուլուլանդայի ամենաչնչին կտորն անգամ։ միայն Անգլիան հաստատ մտադիր է արգելք դնել Ցէտիվայօի անզթութիւններին, և վերանորոգութիւն անել զինուորական ներկայ կազմակերպութեան մէջ, որովհեաև ներկայինս չափազանց անտանելի է ժողովրդի համար։

Սրանից յետոյ սիր Գարնէտ-Վ.օլզէլէյ ասաց, որ նրանք կարող են այժմ վերադառնալ իրանց երկիրը և պահել իրանց անասունները, այն պայմանով միայն, որ նրանք յանձնեն անգլիացիներին այն անասունները որոնք պատկանում են թագաւորին։ Ցէտիվայօ փախստական է, և նա այլ ևս երբէք չէ կարող յուսալ, որ մի օր նա կարող է կրկին թագաւորել։

Սիր Գարնէտ-Վ.օլզէլէյ խոստացաւ, որ նա կը վերականգնէ խաղաղութիւնը, միայն նա խնդրել է, որ նրանք ութ օրից յետոյ կրկին ժողովվին Էմմանուզէն, որտեղ նա նրանց կը կարդայ իր վճռական պայմանները։

Մօղայօ անունով մի նշանաւոր զուլուս, որը ծէնդիլօվայի զօրքերի հրամանատարութեան պաշտօն էր վարում, պատասխանեց, որ զուլուսները այլ ևս առաջնորդ չունեն, և նրանք այլ ևս նէզր թագաւոր չեն կամենում ունենալ։ Նրանք կամենում են մի սպիտակ թագաւոր ունենալ, և մտնացոյց են արել թէ ում են կամենում։

Սիր Մատթէոս-Արնօլդ վերջին օրերս լոյս տեսած մի փոքրիկ գրքոյկի մէջ մէկ յօդուածէ հրատարակել Լօնդոնի ֆրանսիական կոմէդիաների մասին։ Յօդուածը նշանաւոր է, և մեծ զուարճութեամբ է կարդացվում անգլիական ժողովրդի մէջ նրանով, որ այդ յօդուածի մէջ սաստիկ խստութեամբ են քննադատված Վիկտոր-Հիւգօ և ուրիշ ֆրանսիական դրամատիկական գրողներ։ Բէլգիական լրագիրներից մէկը այս յօդուածի վերաբերութեամբ ցաւ է յայտնում, որ այդպիսի մի հոչակաւոր քննադատ (critique), ինչպէս սիր Մատթէոս-Արնօլդն է, գործ է դրել իր տաղանդը այսպէս անտեղի և անարդարութեամբ։ Ցիշեալ լրագիրը աւելացնում է. «Ենթադրենք մինչև անգամ որ ֆրանսիական շ կ օ լ ա յ ի դէմ կազմված քննադատութիւնները արդարացի էլ են, բայց ինչու ջանալ անգլիականը գերազանց ցոյց տալ ֆրանսիականից, մինչդեռ արդարացի խօսելով ներկայ անգլիական շկոլան անհամեմատ ստոր է ֆրանսիականից։»

«Times» լրագրի թղթակիցը Դրիֆլտից մի քանի տեղեկութիւններ է հաղորդում այն տեսութեան մասին, որ սիր Գարնէտ-Վ.օլզէլէյ ունեցաւ տեղացի այն առաջնորդների հետ, որոնք եկել էին նրան յայտնելու իրանց հնազանդութիւնը։

Սիր Գարնէտ նրանց ասաց, թէ չը նայելով, որ Անգլիան նոյն իսկ զուլուսների սովորութեան համեմատ, իրաւունք ունի նուաճեալների երկիրը իրան գրաւել, բայց և այնպէս Անգլիան ձեռնամուխ չի լինի այդ երկրին, միայն նա կը բաւականանայ նրանով, որ այդ երկիրը կը բաժանէ չորս կամ հինգ մասների, որոնց կառավարութիւնը կը յանձնէ զուլուս անկախ իշխաններին (բաժանեա զի տիրեսցես.)։

Սրանից յետոյ սիր Գարնէտ աւելացրեց, որ Զուլուլանդի զինուորական սիստէման պէտք է ոչնչանայ, և նոր զինուորական սիստէմա պէտք է մտցնվի, որ ամուսնութեան թոյլաւութիւն պէտք է լինի, որ Ցէտիվայօ գահընկէց կամ գահազուրկ պէտք է ճանաչուի, որ Զուլուլանդը ամբողջապէս զուլուս իշխանների սեփականութիւն պէտք է համարվի, և եթէ այդ իշխանները իրանց հողից ծախեն կամ ընծայեն որ և է եւրոպացու, Անգլիան այդ վաճառական չի ճանաչի։ Այստեղ մենք ակամայ յիշում ենք այն արջին, որը թաթը դրած որսի վրա, ոչ ինքն է ուտում, և ոչ ուրիշին է թողում ուտելու. բայց կարծիք չը կայ, որ մի օր այդ արջը կը քաղցի։ Անգլիայի այս կերպ վարմունքը մեզ համար նորութիւն չէ. դա անգլիական խոր քաղաքականութիւնն է. Անգլիան այս մի և նոյն քաղաքականութիւնը գործ է դնում և արևելեան հարցի մէջ։

«Standard» լրագրի թղթակիցը Դիւրբանից գրում է այդ լրագրին, որ ինքը պատիւ ունեցաւ տեսակցելու զօրքերի ընդհանուր հրամանատար սիր Գարնէտ-Վ.օլզէլէյի հետ, և որ այդ տեսակցութեան միջոցին պ. հրամանատարը այն միտքն է յայտնել, որ իբր պատերազմը վերջացած է, բայց մի և նոյն թղթակիցը յայտնում է, որ գաղթականութեան ժողովրդական կարծիքը համաձայն չէ հրամանատարի կարծիքին. ժողովուրդը ժգոհութիւն է ցոյց տալի սիր Գարնէտի պայմաններին, և ասում է, որ այդ պայմանները չեն հասցնում վերջնական եզրակացութեան, հետևաբար և ժողովուրդը մնում է մի և նոյն վնասների ու սպառնութիւնների սարսափի ներքոյ, որոնց նա ենթակայ էր պատերազմի ժամանակ։ Ժողովուրդը չէ վախենում ծովերեայ ցեղերից, որոնք խոստովանեցին, որ նրանք խաբված են եղել Անգլիայի զօրութեան մասին, և ասել են, որ եթէ գիտենային, թէ այդ պատերազմը այսպիսի աղետալի հետևանքների կը հասցնի, նրանք երբէք չէին համարձակի անգլիացիների դէմ զէնք վերցնելու, և խոստացան, որ այսուհետև նրանք այլ ևս երբէք զէնք չեն բարձրացնի անգլիացիների դէմ։

Բայց այս մի և նոյնը չէ կարելի ասել և երկրի ներսի ցեղերի մասին, մանաւանդ որ, ինչպէս յայտնի է Ցէտիվայօ տեղացի վեց առաջնորդների և հազար քաջ զինուորների հետ միասին քաշուել է Իւլիւնդի, և նա այդ ուժով դեռ շատ վնասներ կարող է հասցնել։ Ճշմարիտ է, անգլիացիք տեղացի առաջնորդներից մէկին անգլիական զօրքերով նրա դէմ ուղարկեցին, բայց եթէ առաջնորդը յաջողութիւնը չը գտնի, կամ յաղթված վերադառնայ, այն ժամանակ լորդ Շէլմֆօրդի յաղթութիւնը Իւլիւնդիում կը տատանէր, և անգլիացիք ստիպված կը լինէին նորից սկսել պատերազմը։

Բացի այս «Standard» լրագրի թղթակիցը յայտնում է, թէ պատերազմը դեռ մի կատարեալ վերջ չը ստացած սիր Գարնէտ-Վ.օլզէլէյ հրաման է տուել ծովային զօրքերին անմիջապէս Անգլիա վերադառնալ. բացի այս նա պատրաստութիւն է տեսնում վեց գունդ հեաևակ զօրքերի և երկու գունդ հեծելազօրի ճանապարհ դրել դէպի Անգլիա։ Մի բրիգադ էլ ուղևորվեցաւ ծովեզերքում բնակվող այն խաղաղ ցեղերի մօտ, որոնցից ոչինչ առանձին վտանգ չէ սպասվում։

Սիլ Գարնէտ-Վ.օլզէլէյի բոլոր այս վարմունքից կարելի է այն եզրակացութեան հանել, որ որքան լորդ Շէլմֆօրդ ծանր կերպով էր նայում զուլուսների պատերազմի վրա, այնքան նոր հրամանատարը առանձին նշանակութիւն չէ տալի այդ պատերազմին, և այս պարզ երևում է նրանից, որ սիր Գարնէտ անխնայ ցիր-ցան է անում այն զօրութիւնները, որոնց ժողովելու համար լորդ Շէլմֆօրդ այնքան եռանդ ու ջանք էր թափել։

«Standard» լրագրի մի ուրիշ թղթակից էլ յայտնում է, որ վերջին ժամանակներս մի պատերազմ տեղի ունեցաւ անգլիացւոց ու զուլուսների մէջ. այդ ճակատամարտի միջոցին թշնամիների թիւը 20,000 էր հասնում։ այդ օրը նրանք ութ հարիւր հոգի կորցրին, բոլոր ութ հարիւրն էլ պատերազմի դաշտի վրա անշնչացած պառկած էին։

Այս պատերազմից յետոյ սահմանագլխի վրա գտնվող բոլոր ցեղերն էլ իսկոյն յայտնեցին իրանց հնազանդութիւնը։

Չը նայելով այս փայլուն յաջողութեանը, այնու ամենայնիւ պ. թղթակիցը յոյս չունի, որ խաղաղութիւնը կատարեալ լինի. նա ասում է, որ Կապի գաղթականութեանը մի յարատև խաղաղութիւն տալու համար, անհրաժեշտ է Զուլուլանդի բոլոր ցեղերին ստիպել, որ նրանք յանձնեն անգլիացիներին այն եօթանասուն հազար հրացանները, և այն երեք հարիւր յիսուն հազար տէզերը, որոնց նրանք գործ էին ածում անգլիացւոց դէմ մղված պատերազմի միջոցին։

«Times» լրագրի թղթակիցը Նորերումս հեռագրում է այդ լրագրին Դիւրնֆօրտից, տեղացի Օհամ առաջնորդը, որ անգլիական զօրքերի հրամանատարութեամբ ուղարկված էր Ցէտիվայօի դէմ, այս օրերս գերի վերցրեց այդ թագաւորին։ Բայց մի քանի ուրիշ լրագիրների թղթակիցներ հերքում են այդ լուրը, և յոյս են յայտնում, որ նրան շուտով կը գերեն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Էրզրումից մեզ հաղորդում են, որ յուլիսի 19-ին այնտեղից ուղևորվել է Վան պ. Կամսարականը Վանի ռուսաց փոխ-հիւպատոսի պաշտօնը վարելու համար։

—Էրզրումից մեզ գրում են. «Հայաստանի ամեն կողմերը և անկիւնները դեռ կը նեղվին, կը հարստահարվին և կը սպանվին տաճիկներից կամ քիւրդերից խեղճ և թշուառ հայերը. յուլիսի մէջ, անցեալ ամսոյ դատ մը տեղի կունենայ ի Մուշ հայ և տաճիկի մը մէջ. սոյն դատը նայուած ատեն դատարանի տաճիկ անդամոց մինը բոլոր պաշտօնէից ներկայութեամբ կը հայհոյէ հայ բողոքողին և կը վատաբանէ զինքը. այս հրապարակական թշնամանքը Մշոյ հայոց դառն ցաւ աղդելով կը ժողովին Ազգային առաջնորդարանը և մի հանրագիր պատրաստելով կը յանձնեն հայ երիտասարդի մը որ շուտ ընդ փոյթ Կարին տանի և յանձնէ իրենց առաջնորդ հայր Գրիգորիս եպիսկոպոսին Գօմիսարներու ներկայացնելու համար. բայց խեղճ երիտասարդը, հազիւ թէ Մուշ քաղաքից 5 ժամ հեռացած կը լինի, ուր կը յարձակվին իր վրա վերոյիշեալ հայհոյող անդամի ծանօթ քիւրդերը, որք այնտեղ իրենց ոչխարները կորած են եղել, և սպանելով զինքը քովը եղած հանրագիրը կառնեն։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ, 6 օգոստոսի։ «Բարան» նաւը վերադարձաւ Նովայա Զէմլիա բևեռային երկրից, իր շտուրման Տիագինի հետ և նրա ամբողջ ընտանիքով։ Տիագին մնաց այնտեղ ամբողջ ձմեռը իր ընտանիքով։ Բոլորն էլ առողջ են։ Արշաւանքի այդ առաջին փորձը աջողված է համարվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի։ «Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Կայսրը հրամայեց ստեղծել մի առանձին պատուանշան այն անձինքների համար, որոնք մասնակցեցին Բոլգարիայի մէջ քաղաքական վարչութիւնը մտցնելուն։ Դոնդուկով—Կորսակովին և Ստոլիպինին թագաւոր Կայսրը յայտնեց շնորհակալութիւն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի։ «Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ «Русская Правда» լրագիրը ստացել է առաջին նախազգուշութիւն։ Երկկ ուղևորվեց դէպի Մոսկվա բոլգարական պատգամաւորութիւնը։ Բոլգարիա գնալով պատգամաւորները կանցնեն Կիևվի և Օդեսայի վրայով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ երկկ «Ցարեվնա» անունով եախտի վրա փառանդը «Սլավեանսկ» և «Մարէվօ» նաւերի ուղեկցութեամբ ճանապարհ ընկաւ Նվէդիա և Դանիա։ Հրամայված է, որ առ այժմ մինչև որ համալսարանների համար նոր ընդհանուր կանոնադիրք կը գրվի, յանձնվի լուսաւորութեան մինիստրին, որ նա առանց քաշվելու համալսարանական ներկայ կանոնադրութենից, ժամանակաւոր պատուէրներ տայ համալսարանական տեսչութիւններին. մինիստրը իրաւունք կը տայ տեսչութիւններին զանազան արտօնութիւններ տալու, օգնութիւններ անելու, և թոշակառուներ նշանակելու. այդ կանոնադրութիւնը պէտք է մտցնել բոլոր համալսարանների մէջ։ Երջանների հոգաբարձութիւններին իրաւունք է տրվում զեներալ—նահանգապետի համաձայնութեամբ փոփոխութիւններ անել տեսչական կազմակերպութեան մէջ։ Վերատեսուչը նշանակվում է մինիստրից, իսկ նրա օգնականը—հոգաբարձութենից։

ԱԹԷՆՔ, 9/21 օգոստոսի։ Թագաւորական հրովարտակով կանչված են դրօշակի տակ գվարդիական երկրորդ շրջանի զօրքերից 8000 հոգի։ Թագաւորն իր Զանոդ գնալը յետաձգեց։

ՕԴԷՍՍԱ, 6 օգոստոսի։ Այսօր հրատարակվեց 28 մարդկանց դատավճիռը. Զուբարով, Լիզոգուբ, Դավիդէնկո, Վատէնբէրգ և Լօգովէնկո դատապարտված են կախաղանի. Գուկովսկի դատապարտված է աքսորանքի, իսկ մնացած 22-ը դատապարտված են տաժանակիր աշխատանքներին, իւրաքանչիւրը 10 տարի ժամանակով։ Նրանցից մէկը դատապարտված է տաժանակիր աշխատանքների անորոշ ժամանակով։ Գեներալ նահանգապետը սահմանափակեց Կուտինգօնսկայա կնոջ դատավճռի ժամանակամիջոցը չորս տարով. Սկօրնեակով և Նիկիտին նաւաստիներին 10 տարվայ պատիժը փոխեց ութ ութ տարվայ, իսկ մնացածների դատավճիռը վերացրեց։ Վաղը ամսի տասին առաւօտը նշանակված է Զուբարովի, Լիզոգուբի, և Դավիդէնկոյի մահուան պատժի կատարելը։ Իսկ Վատէնբէրգի և Լօգովէնկոի պատիժը կը կատարվի Նիկոլաեվի մէջ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Մեծ Իշխան Պավել—Ալէքսանդրովիչ նշանակված է Ֆիլդզէլ—ադիւտանտ, Դմիտրի Կոնստանտինովիչ ստացաւ պօրուչիկութեան աստիճան, Ստօլիպին ստացաւ գեներալ ադիւտանտութեան աստիճան։ Բոլգարական դրուժինայի մի քանի օֆիցերներ հասան Ս. Պետերբուրգ, նրանք մտադիր են մտնել զինուորական բարձրագոյն ուսումնարաններ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 37 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 35 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 232 ր. 75 կ., երկրորդ 233 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 25 կ., երկրորդ 92 ր., երրորդ 92 1/8 ր., ոսկի 7 ր. 83 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25 1/8 պէնս։ Տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ «ՓՈՐՁ» ԱՄՍԱԳՐԻ

Եօթերորդ և ութերորդ (յուլիսի և օգոստոսի) համարները:

Բովանդակութիւն.—1. Հայի խնդիր, ազգային վիպասանութիւն Պերճ Պռօշեանցի: 2. Դատաստանագիրք Մ. Գոշի, իրաւաբանական հետազօտութիւն Վահան վ. Բաստամեանցի: 3. Բնաւորութիւնների ժառանգականութիւնը, Ս. Պալասանեան: 4. Վանից մինչև Տիգրիս, գործ Գ. Պաուլի: 5. Վեհաժողով, Մշեցու նոր սերունդ, վանեցոց չունուազը, բանասեղծութիւններ Գամառ-Քաթիպայի: 6. Շրջաբերական գրատարաններ, ճառ Լ. Մորանդիի: 7. Բաթումի նահանգը, գործ Օսկար Յէյֆելդերի: Ազգային տեսութիւն.—8. Սամանեան ինքնակալութիւն և Ռուսահայք, Ծերենց: —9. Տեղեկագիր «Դպրոցասիրաց—Արևելեան» ընկերութեան: Սկզբնական կանոնք Կարուց Ս. Լ. գրադարանի: Հիմնական կանոններ Կիլիկեան ընկերութեան: 10. Յուցակ նուիրատուութեանց Ռուբինեան—երկրագործական ուսումնարանի: 11. Նամակներ խմբագրին: Քաղաքական տեսութիւն—12. Իշխան Լուի Նապոլէօնի մահը:—13. Հաշիւ յուլիսի 6-ի ներկայացման յօգուտ հանգուցեալ Ամերիկեանցի ընտանիքի: 14. Գաղղիերէն-Հայերէն-Ցաճկերէն բառգիրք, Նորայրի: 15. Ազգ: Յաւելուած.—16. Խաթաբալա, կօմեդիա Գ. Սունդուկեանցի: 17. Յայտարարութիւններ:

Ստորագրուել կարելի է Թիֆլիսում «Փորձի» խմբագրատանը և Կենտրօնական գրավաճառանոցում: Ստար քաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ հասցէով.—Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала „Пордзъ“

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

		Ր.	Կ.
	վաճառվում են, 'ի միջի այլոց, հետևեալ հայերէն գրքերը.		
Օր.	Տէր-Մարկոսեանց՝ Թաւամագ Մեղու, պատկերազ.	—	40
Բժ.	Տիգրանեան՝ Մարմնակազմական բառարան	1	—
Բժ.	Բաբայեան՝ Ուսումնարանի առողջ. հարցեր	1	—
Սրուանձտեան՝	Թորոս Աղբար մ. ա.	1	25
—	Մանանայ	1	75
—	Շուշան Շաւարշանայ	—	50
Խրիմեան՝	Հրաւիրակ Արարատեան	1	25
—	Սիրաք և Սամուէլ	1	45
—	Յիսուսի վերջին շաբաթը	—	70
—	Մարգարիտ Արքայութեան	—	75
—	Դրախտի ընտանիք	1	25
—	Վանգոյժ	—	20
Պէշիքթաշլեան՝	Մատենագրութիւնք	2	75
Կոստանեան՝	Մէթոդին վերայ	—	75
Դուրեան՝	Տաղք և թատերերգութիւնք	1	75
Ալթունեան՝	Տեղիկ. Հայոց գաղթականութեան	1	20
Ծերենց՝	Թորոս Լեռնի	1	—
Հալլաճեան՝	Նոր երգարան	—	75
Զերազ՝	Գրական փորձեր	1	—
—	Ազգային դաստիարակութիւն	1	—
—	Հայաստան և Իտալիա երկ. տիպ	—	60
—	Թէ ինչ շահեցանք Բերլ. վեհաժ.	—	40

Երևանեան հրապարակի վրա ԹԱՄԱՄՇԵՎԻ կարավանսարայի դէմուդէմը № 11. տան վերի յարկում վարձով տրվում է մէկ ԴԱՀԼԻՃ ծառայով, լաւ կարասիքով և առաւօտ-երեկոսամօվարով. դահլիճը մի բալկօն ունի իր առաջ: Գինն է ամսական 40 բուբլ: Բացի դահլիճը մի և նոյն տանը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍԵՆԵԱԿՆԵՐ կարասիքով ծառայով, սամօվարով և լուսաւորութեամբ. այդ սենեակները ամսական արժէն 25, 20 և 15 բուբլ: Այդ սենեակներում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի և նոյն տան դրան առաջ միրգ ծախող ՅԱԿՈՎԲԻՆ:

Յունիսի 17-ին Արծրունու թատրօնում բարեգործական նպատակով տված ներկայացումից գոյացաւ 294 ր. գումար. տոմսակներ ծախվեցաւ 226 ր. 70 կ., իսկ ընդհանուր մուտքի մնացած մասը, այսինքն 67 ր. 30 կ., զանազան անձերի զոհաբերութիւնն է կազմում: Ծախսերի բոլոր գումարը կազմում է 139 ր. զուտ գումար մնում է 155 ր., որը յանձնվեցաւ պ. Փուղինեանցին հասցնելու ըստ պատկանելոյն: Մեր սրբազան պարտաւորութիւնն ենք համարում՝ մեր անկեղծ շնորհակալութիւնը յայտնել այն անձանց, որոնք իրանց ներկայութեամբ պատուեցին մեր ներկայացումն:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ» ԱՄՍԱԳՐԻ

Խմբագրութիւնից

«Մանկավարժական Թերթը» իւր երկրորդ տարուայ շրջանում հրատարակվելու է նոյն ուղղութեամբ և ծրագրով, ինչպէս որ առաջին շրջանում՝ հետևեալ պայմաններով:

1. Տարեկան կը լինի 10 գրքոյկ, իւրաքանչիւրը 6 թերթից (96 երես):

2. Տարեկան գինն է ամենայն տեղ 6 ռ.:

3. Մինչև սեպտեմբերի 10-ն բաժանորդագինը վճարող բաժանորդը կը ստանայ ձրի յունիս ամսի վերջին մի ընտիր հեղինակութիւն հայերէն լեզուով թարգմանութեամբ կամ ինքնուրոյն՝ ընթերցանութեան համար:

4. Եթէ բաժանորդաց թիւը հասնի մինչև 480-ի, այն ժամանակ խմբագրութիւնս իւր բաժանորդներին ձրի տալու է երկու գիրք:

5. Ուսուցիչները կարող են բաժանորդագինը վճարել երկու նուազ. առաջին երեք բուբլին յուլիսի սկզբին. միւս երեք բուբլին նոյեմբերի մինչև 6-ն: Վերջին նուազագոյն բաժանորդագինը ուշանալիս «Թերթը» չի ուղարկվի նոյեմբերի գրքոյկից սկսած մինչև դրամը ստանալը:

6. Որ և իցէ գրքոյկի չը ստանալու մասին բողոք հարկաւոր է ուղարկել ուղղակի խմբագրութեանս հետևեալ №-ը ստանալուն պէս:

Բաժանորդ գրուել ցանկացողները կարող են դիմել խմբագրութեանս գրասենեակը, որ գտնվում է պ. Ց. Մարտիրոսեանի տպարանում, Օրբէլեան փողոցի վերայ, Այէքսանդրեան պարտէզի մօտ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. *Въ контору Редакціи Армянскаго Журнала „Педагогическій Листокъ“.*

Խմբագիր ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

ԲԱՐՁՐ ուսում ստացած մի ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ պատրաստում է աշակերտներին գիմնազիական կուրսի բոլոր ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ: Հասցէն կարելի է իմանալ «ՄՇԱԿԻ» խմբագրատանը:

2—4

Ըստ հրամանի լուսաւորչեան ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ, յԱտենի վիճակային կոնսիստորիայի Վրաստանի և Իմերէթի նշանակեալ է ԱՃԲԴԱԽՕՍՈՒԹԻՒՆ յ3 օգոստոսի սոյն ամի և ԿՐԿՆԱՃԲԴԱԽՕՍՈՒԹԻՒՆ յ8 դոյն ամսոյ վասն տալոյ կապալաւ ՉԳՏԱՆԵՑԵԱԼ Ի ՏԸՓԽԻՍ ԳԱՂԱՔԻ ԱԹՈՌԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՍ ցանկացողք կարեն տեսանել զգալանն Ի ԴԻՒԱՆԱՏԱՆ կոնսիստորիայի յիւրաքանչիւր Աստենական աւուր մինչև ց-2 ժամն յետ կէս աւուր:

Անդամ կոնսիստորիայի Սարգիս աւագ քահանայ Աղաջանեանց

2—3

Ի. Ա. ՄԵԼԻՔ-ԲԷԳԼԱՐԵԱՆԻ մասնաւոր բէալական ուսումնարանում ընդունելական քննութիւնները կը սկսվին օգոստոսի 20-ից, իսկ ուսումը կըսկսվի սեպտեմբերի 1-ից: Ուսումնարանը գտնվում է Սադովայա փողոցի վրա, Տուտունովի տանը (նախկին Նագինովի) № 34:

1—3

Սեպտեմբերի 1-ից բացվում է ՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ, որ ԵՐԿՈՒ ԴԱՍԱՏՈՒՆՆԵՐ կունենայ, երկսեռ երեխաների համար: Ուսումնարանի նպատակն է պատրաստել երեխաներին զանազան ուսումնարանների առաջին և երկրորդ դասատունները մտնելու համար: Ուսանողներ բաժանվում են երեք կարգի. երթևեկներ, կիսագիշերօթիկներ և գիշերօթիկներ: Երթևեկները, որոնք մինչև 2 ժամն են մնում ամսական 6 բուբլ են վճարում: Ցանկացողները օգուտ քաղել ճաշից յետոյ եղած ժամի 4—7 պարապմունքներով աւելացնում են 5 ր.: Կիսագիշերօթիկները, որոնք առաւօտեան 6 ժամից մնում են մինչև 7 ժամը երեկոյեան և կունենան նախաճաշիկ և ճաշ պէտք է ամսական 25 բուբլ վճարեն: Գիշերօթիկները ամսական 40 ր. են վճարում: Ցանկացողները պէտք է դիմեն Կոնսուլսկայա փողոց Տէր-Ղուկասովների տունը № 6. է. Ֆ. Դօլգօվօ-Սաբուրօվօին:

1—6

ՕԳՈՍՏՈՍԻ 11 — ՏԵՂԵԿԱՑՈՒՑ — ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Օգոստոսի 10-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	7	98
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1480	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1240	—
Վիդրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	238	—
Երկրորդ 5% վիդրիչնի »	237	—
Մարսելի կուրսը 269—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա	9	40
Վենայի կուրսը արժէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը	4	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօցկու	7	05
» միւս տեսակը	6	95
» չաքար աւազը	5	60
» տրանզիտը	5	10
» մաքսը վճառած	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից	8	—
Միւս տեսակը հին սերմից	7	40
Բուրդը թուշի	7	50
» թարաքամի	4	—
Ալիւրը Շորագալու	2	20
» Երևանի	—	—
Գարին	1	40
Մոմը ընաճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ	180	—
Կախեթունը	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	60	—
Օֆէն մօկօի	26	—
« միանի	22	—
« Մանտիկիօն	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կօպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 բուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ:	երեկոյեան.
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլօվօ	1. 29	11. 59
Ռիօն	6. 47	
Փօթի	9. 40	
	առաւօտ:	
Փօթիից	9. 13	
Ռիօն	12. 13	
Միխայլօվօ	5. 39	1. 37
Գօրի	7. 5	4. 8
Թիֆլիս	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գօրի	3.20	2.40	1.33
Սուրամ.	5.22	3.92	2.18
Ռիօն	9.	6.75	3.75
Փօթի	13. 1	9.75	5.42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փաստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7. իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փաստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր. Բագուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր. Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կօպ.
Բաց նամակ արժէ	2
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	7
Ամերիկա	7
Պարսկաստան	7
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 8-ից մինչև 10 ժամը:

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրաչովիչ նեղքին հիւանդութիւնների:

Երեքշաբթի. Վերմիշեվ նեղքին հ., Բէյլս աչքի հ., ժուրավլէվ կաշու և վեներական հ., Բաբով կրծքի և նեղքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և մանկական հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ նեղքին հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ.:

Հինգշաբթի. Վերմիշեվ նեղքին հ., ժուրավլէվ կաշու և, վեներական հ.:

Ուրբաթ. Լիսիցեվ նեղքին հ., Բաբով կրծքային և նեղքին հ., Բաբաեվ հոգեկան հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և մանկական հ.:

Շաբաթ. Վերմիշեվ նեղքին հ., Բէյլս աչքի հ., ժուրավլէվ կաշու և վեներական հ.:

Օբրէխա, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ խեղճ հիւանդներին Բժշկանոցի տոմսակով:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԹԻՖԼԻՍ. Բաֆֆի. Ձեր «Ոսկի աքաղաղ» վիպասանութեան տպագրութիւնը կը սկսենք չորեքշաբթի օրվանից:

—Վ.-ԱԳՈՒԼԻՍ. Բ. Տ. Մ. Ձեր հասցէով ուղարկեցինք «Մշակի» ներկայ տարվայ Վ.-Ագուլիսի 16 բաժանորդների ապահովագիրները: Խնդրում ենք ապահովագիրները յանձնել բաժանորդներին:

—ԳԱՆՁԱԿ. Մաղն. Ձեր յուլիսի 30-ին գրած նամակը հետաքրքիր չէ: Գցեցինք զամբիւղը:

—ԿԱԼԿԱԹԱՑ. *** Դուք ցանկանում էք «Մշակին» բաժանորդ գրվել. փողը կարողէք անգլիական փաստայով ուղարկել: Տարեկան բաժանորդագինը 10 բուբլ է:

Дозволено Цензурою 10 Августа 1879 г. Тифлисъ — Տպարան Ա. Ա. Միխելսոնի — Типографія А. А. Михельсона